ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 55-Ա

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 02-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 6-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների,

1.Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 02-ի՝ թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ -13 դեմ 0 ձեռնպահ 0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 02-ի
N 55 -Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Բաղրամյան համայնքի 2022 թվականի առաջին նստաշրջանի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

   Զեկ Շ.Առաքելյան

2. Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի 08 փետրվարի թիվ 9-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   Զեկ Հ.Խաչիկյան

3. Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի 08 փետրվարի թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   Զեկ Հ.Խաչիկյան

4. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում շրջանավարտներին գումար հատկացնելու մասին:

   Զեկ Մ.Հարթենյան

5. Համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին

   Զեկ Ա.Խաչատրյան

6. Տեղական վճարների արտոնություն սահմանելու կանոնակարգը հաստատելու մասին

   Զեկ Ա.Խաչատրյան

7. Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցույթային հանձնաժողով ստեղծելու մասին:

   Զեկ Ա.Խաչատրյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդի և հողամասերի վարձակալությամբ/կառուցապատման իրավունքով /մրցույթով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին

   Զեկ .Հ.Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավականակտերի մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 33-
րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետովև 34 -րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-
ին մասի 42-րդ կետով

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավգանու 2022 թվականի փետրվարի 08-ի թիվ 9-Ա
որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները համաձայն հավելվածի

2.Սույնորոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 02-ի
N 56-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Բաղրամյանի <<Դալարիկ մանկապարտեզ>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածք,աշխատակիցների քանակ,հաստիկացուցակ և պաշտոնային դրուքաչափերում ավելավնել 0.5/կես / դրույք դռնապահ հաստիքային միավորը:

Համայնքի ղեկավար **Շ.Առաքելյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվիրավականակտերիմասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 33-րդհոդվածիառաջինմասի 1-ինկետովև 34 -րդհոդվածով, «Տեղականինքնակառավարմանմասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 18-րդհոդվածի 1-ինմասի 42-րդկետով

1.ՀայաստանիՀանրապետությանԱրմավիրիմարզի Բաղրամյան համայնքիվագանու 2022 թվականի փետրվարի 08-իթիվ 12-Ա որոշմանհավելվածումկատարելիետևյալփոփոխությունները համաձայն հավելվածի

2.Սույնորոշումըուժիմեջէմտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 02-ի
N 57-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Բաղրամյանի <<Քարակերտ թիվ 2 մանկապարտեզ >> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածք,աշխատակիցների քանակ,հաստիկացուցակ և պաշտոնային դրուքաչափերում ավելավնել 0.5/կես/ դրույք պարուսուց հաստիքային միավորը:

Համայնքի ղեկավար **Շ.Առաքելյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 58-Ա

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» 10 րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1–իմ մասի 42–րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Բաղրամյան համայնքի 2022 թվականի բյուջեյի <<Սոցիալական օգնություններ >> բաժնից տրամադրել գումար Բաղրամյան համայնքի տարածքում գործող դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներին համձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Բաղրամյան համայնքի ավագանու

2022 թվականի հունիսի 02-ի

N 58-Ա որոշման

հ/հ	բնակավայր	դպրոցը	12- րդ դասարանի աշակերտների թիվը	Գումարի չափ
1	Երվանդաշատ	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	4	20000
2	Բագարան	Բագարանի միջնակարգ դպրոց	5	25000
3	Վանանդ	Վանանդի միջնակարգ դպրոց	7	35000
4	Հուշակերտ	Հուշակերտի միջնակարգ դպրոց	7	35000
5	Արտամետ	Արտամետ միջնակարգ դպրոց	1	5000
6	Տալվորիկ	Տալվորիկի հիմնական դպրոց	3	15000
7	Բաղրամյան	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	1	5000
8	Արևադաշտ	Արևադաշտի միջնակարգ դպրոց	4	20000
9	Լեռնագոգ	Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց	13	65000
10	Դալարիկ	Դալարիկի Հ Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց	27	135000
11	Քարակերտ	Քարակերտի N 1 միջնակարգ դպրոց	19	95000
12	Քարակերտ	Քարակերտի N 2 միջնակարգ դպրոց	13	65000
13	Արգինա	Արգինայի միջնակարգ դպրոց	1	5000
14	Շենիկ	Շենիկի միջնակարգ դպրոց	12	60000
		Ընդամենը	117	585000

Համայնքի ղեկավար **Շ.Առաքելյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 59-Ա

<<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» 18 րդ հոդվածի առաջին մասի15-րդ կետով,102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերով,<<Համայնքային կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության 4-րդ,11-րդ և 18-րդ հոդվածներով,<<Վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով,2-րդ հավելվածի 2.3-րդ մասի <<Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը>> ցանկի 29-ին կետով և հիմք ընդունելով Բաղրամյան համայնքի ավագանու 28.12.2021 թվականի թիվ 67-Ա որոշումը

1.Դադարեցնել << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական , << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային

կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շենիկ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարան համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կողբավան համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական, << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը՝ համարելով վերակազմավորված ,որպես մեկ համայնքապետարանի աշխատակազմ՝ <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի:

2.Լիազորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Բաղրամյան համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգյաների բաժնի պետ Հովհաննես Հարությունյանին պահանջվող փաստաթղթերը ներկայացնել

պետական ռեգիստրի գործակալություն՝նշված համայնքային կառավարչական հիմնարկները հաշվառումից հանելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 60-Ն

2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Սահմանել, որ

1.Բաղրամյան համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի և համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման
վճարի՝ 2022 թվականի համար սահմանված դրույքաչափի նկ ատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափի արտոնություն,

եթե՝ երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Բաղրամյան համայնքում,

ա. զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է,

բ. երկկողմանի ծնողազուրկ երեխա է,

գ. անհայտ կորած զինծառայողի երեխա է

դ.1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխա է,

ե.հաշմանդամ երեխա է.

2) Բաղրամյան համայնքի համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի և համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման
վճարի՝ 2022 թվականի համար սահմանված դրույքաչափի նկ ատմամբ կիրառվում է 50% նվազեցում արտոնությունը՝

ա. միայնակ մայրերի և միակողմանի ծնողազուրկ երեխաների համար

բ. ընտանիքի երեք և ավելի անչափահաս երեխաներից միևն ույն նախադպրոցական ուսումնական կամ միևնույն արտադպ րոցական դաստիարակության հաստատություններ հա ճախող երկու և ավելի երեխաների համար:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառ ման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղ թերը՝

1) Սույն որոշման 1-ին կետի 1-
ին ենթակետի <ա> պարբերությունում նշված դեպքերում՝

երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծ ննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողի կամ ծնողների մահվան վկայականի պատճենը,համապատասխան փաստաթուղթ պատերազմի մասնակից լինելու մասին տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լին ելու մասին:

2) որոշման 1-ին կետի 1-
ին ենթակետի <դ> և <ե> պարբերություններում նշված դեպ
քերում՝

երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծ
ննդյան վկայականի պատճենը, հաշմանդամություն ունեցող ա
նձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որ
ոշման պատճենը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշ
վառված լինելու մասին:

3) որոշման 1-ին կետի 2-
րդ ենթակետի <ա> պարբերությունում նշված դեպքերում՝

երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծ
ննդյան վկայականի պատճենը, տեղեկանք բնակչության ռեգի
ստրում հաշվառված լինելու մասին, ՔԿԱԳ բաժնի տեղեկանք
ը՝ երեխայի ծննդյան վկայականում
ծնողի մասին տեղեկություններ մտցնելու հիմքի վերաբեր
յալ:

4)որոշման 1-ին կետի 2-
րդ ենթակետի <<բ>> պարբերությունում նշված դեպքերում՝

երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծ
ննդյան վկայականի պատճենը, տեղեկանք բնակչության ռեգի
ստրում հաշվառված լինելու մասին, տեղեկանք երեխաների՝ մ
իևնույն նախադպրոցական ուսումնական կամ արտադպրոցակ
ան դաստիարակության հաստատություն հաճախելու վերաբե
րյալ:

3.Համայնքի ղեկավարին վերապահել սույն որոշման իրականացման լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարին

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 61-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրաապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամաբ հաստատված կարգի 47-րդ և 49-րդ կետերով և հիմք ընդունելով Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրլու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն կից հավելված 1-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
02 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆ ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝ Շ.Առաքելյան –Բաղրամյան համայնքի ղեկավար

Անդամներ՝ Ա. Գրիգորյան - Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Ա.Դավթյան Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Ա.Կարապետյան Ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Մրցութավար՝ Հ.Ավետիսյան - Բաղրամյան համայնքի ղեկավարի տեղակալ

Արձանագրող՝ Հ.Հարությունյան- Բաղրամյան համայնքապետարանի քարտուղարության,անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնալոգյաների բաժին պետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարուժան Հակոբյան –ավագանու անդամ

Մուրադյան Գևորգ ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 62-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ ենթակետով,համաձայն <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի, 23-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Հաստատել Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման և հողամասերի վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրման կանոնակարգը՝ ըստ հավելվածի:

2.Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ Շ. Առաքելյանին սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող պահանջները:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի 02 հունիսի
N 62-Ն_ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1.Ընդհանուր դրույթներ

1.1.Սույն կանոնակարգով կարգավորվում է Կազմակերպչի կողմից հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների,մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման գործունեությունը:
1.2.Սույն կանոնակարգը չի տարածվում պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ ընթացքում աճուրդների հետ կապված հարաբերությունների վրա:
1.3.Սույն կանոնակարգով չի կարգավորվում փակ աճուրդների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
1.4.Սույն կանոնակարգով սահմանվում են աճուրդի ձևերը՝ դասական կամ հոլանդական:
1.5.Աճուրդի միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները սահմանվում են օրենքով, իսկ աճուրդների ընթացքում վճարները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:
1.6.Աճուրդների իրականացման նպատակով Կազմակերպչի ղեկավար մարմնի /տնօրենի/ հրամանով ստեղծվում է աճուրդային հանձնաժողով, որի կազմը պետք է բաղկացած լինի առնվազն 3 անձից: Հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

2.Աճուրդի հրապարակային ծանուցումը և մասնակիցների ու մասնակից չհամարվող անձանց գործողությունների վարքագծի կանոնները

2.1.Աճուրդը պետք է սկսվի 9:00-18:00 ընկած ժամանակահատվածում, իսկ վաճառքը պետք է իրականացվի հրապարակային ծանուցման մեջ նշված օրը:
2.2.Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի զանգվածային լրատվության միջոցներով կամ էլեկտրոնային միջոցների օգնությամբ հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 30 օր առաջ:
Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը աճուրդի կայացման օրվանից առնվազն 1 օր առաջ զետեղվում է՝ աճուրդի կայացման վայրում:
2.3.Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկությունները:
2.4.Հրապարակային ծանուցմամբ կարող է նախատեսվել աճուրդի հաղթող համարված մասնակցի կողմից իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում /30 րոպեի ընթացքում/, որը հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ,իսկ սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հետ չի վերադարձվում:

2.5.Գույքի վիճակի,ինչպես նաև գույքի վերաբերյալ հրապարակված տվյալների անճշտության համար Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում,եթե անճշտությունը չի կատարվել իր կողմից:
2.6.Սույն կանոնակարգին կարելի է ծանոթանալ աճուրդի կազմակերպման վայրում աճուրդը սկսվելու պահից առնվազն 30 րոպե առաջ: Կանոնակարգը տրամադրվում է համապատասխան դիմումի հիման վրա, որի համար Կազմակերպիչը պահանջում է պատճենահանման համար նախատեսված ծախսերը:
2.7.Աճուրդի մասին հարպարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:
2.8.Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք /այսուհետև՝ դիտորդ/ աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:Աճուրդի մասնակից չհամարվող անձանց /դիտորդի/ համար ընդհուպ աճուրդի սկսվելը վաճառվում են դիտորդի տոմսեր՝ հաստատված սակագներով:
2.9.Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչնդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

ա/ չհայտնել իրենց դժգոհությունը,սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ,

բ/ չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

գ/ հարցադրումները ուղղել աճաուրդային հանձնաժողովին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

դ/ աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ, բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լոտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույլտվությամբ,

ե/ չթաքցնել օրենքով սահմանված՝ աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

3. Աճուրդի անցկացման պայմանագիրը և կազմակերպչի վարձատրությունը

3.1. Սեփականատիրոջ կամ իրավունքին տիրապետող անձի /այսուհետև՝ Առաջարկող/ և Կազմակերպչի միջև կնքվում է աճուրդի անցկացման մասին գրավոր պայմանագիր, որը հիմք է հանդիսանում Կազմակերպչի կողմից աճուրդի կազմակերպման և անցկացման համար և պետք է ներառի օրենքով սահմանված տեղեկությունները: Աճուրդային հանձնաժողովի կազմում կարող է /են/ ընդգրկվել առաջարկողի ներկայացուցիչը /ները/:
3.2. Եթե Կազմակերպիչը լիազորված է նվազեցնելու լոտի մեկնարկային գինը, ապա աճուրդը անցկացնելու մասին պայմանագիրը պետք է պարունակի նաև համապատասխան դրույթներ՝ նշելով մեկնարկային գինը նվազեցնելու թույլատրելի սահմանները /նվազագույն գինը/:

3.3. Լոտը Կազմակերպչին ի պահ հանձնելու դեպքում պայմանագիրը պետք է պարունակի պահատվությանը վերաբերող դրույթներ:
3.4.Կազմակերպչի վարձատրության կարգը և պայմանները սահմանվում են պայմանագրով:
3.5. Վարձակալության չափը չի կարող փոքր լինել վաճառող լոտի մեկնարկային գնի 3 տոկոսից:
3.6. Լուծարվող իրավաբանական անձի գույքի վաճառքի դեպքում վարձատրության չափը Առաջարկողի և Կազմակերպչի միջև կնքված պայմանագրով չի կարող փոքր լինել վաճառվող լոտի մեկնարկային գնի 5 տոկոսից և չի կարող գերազանցել մեկնարկային գնի 10 տոկոսը:

4. Աճուրդի մասնակցելու պայմանները և լոտի ուսումնասիրումը

4.1. Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները / բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի/, որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացումից առնվազն 30 բոպե առաջ կամ ծանուցման մեջ նշված ժամկետում, չափով և կարգով Կազմակերպչին մուծել են նախավճար / որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենաբարձր մեկնարկային գին ունեցող լոտի մինչև 50 տոկոսը/ և ստացել մասնակցի վկայական:
4.2. Նախքան աճուրդի բացումը մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալ աճուրդի ծանուցման մեջ նշված վաճառվելիք լոտին /լոտերին/:Կազմակերպիչը ծանուցման պահից սկսած /Առաջարկողի աջակցությամբ/ ընձեռում է հնարավորություն լոտը /լոտերը/ ուսումնասիրելու համար՝ հետևյալ կարգով և ժամկետներում.
ա/ անշարժ գույքի համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում / բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի/,
բ/ շարժական գույքի համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ընկած ժամանակահատվածում:
4.3. Եթե վաճառվող լոտն իրավունք է, ապա Կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն տալ մասնակիցներին սույն կանոնակարգի 4.2. կետի ա/ և բ/ ենթակետում նշված կարգով և ժամկետներում ուսումնասիրելու համապատասխան օբյեկտը, որի նկատմամբ գոյություն ունի իրավունքը, ինչպես նաև համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը:
4.4. Պայմանագրով կարող են սահմանվել լոտերին ծանոթանալու ավելի երկար ժամկետներ:
4.5. Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:
4.6. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

5. Աճուրդի կազմակերպումն ու անցկացումը

5.1. Աճուրդները անց են կացվում դասական /գնի ավելացման/ կամ հոլանդական /գնի նվազեցման/ եղանակներով:

5.2.Աճուրդը անց է կացնում աճուրդավարը, որը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը,լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները,մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացվել հարյուր դրամի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

5.3. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

Աճուրդավարը շարունակում է աճուրդը այնքան ժամանակ,քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկող մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է:

Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու համաձայնություն չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը:Լոտը մեկնարկային գնով /հոլանդական աճուրդի դեպքում՝ նվազագույն գնով/ երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

5.4. Դասական աճուրդի դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականի համարին համապատասխանող համարը /քարտը/:

Աճուրդավարը շարունակում է աճուրդը այնքան ժամանակ,քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճիկի երրորդ հարվածից հետո:

5.5. Հոլանդական աճուրդի դեպքում աճուրդավարի կողմից մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը բարձրացնելով իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին և աճուրդավարի կողմից անմիջապես համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

5.6. Հոլանդական աճուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել մեկնարկային գնի 50 տոկոսից, եթե Առաջարկողի և Կազմակերպչի միջև կնքված պայմանագրով այլ բան չի նախատեսված:

5.7. Դասական աճուրդի ժամանակ, եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:

5.8. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով.

Աճուրդային հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը

պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ:Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

5.9. Հոլանդական աճուրդի ժամանակ, եթե մեկից ավելի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա աճուրդային հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին և այդ մասնակիցների միջև իրականացվում է դասական աճուրդ՝ նրանց կողմից առաջարկած գինն ընդունելով որպես մեկնարկային գին:Եթե մեկնարկային գնից բարձր առաջարկներ մասնակիցները չեն ներկայացնում՝ աճուրդում հաղթած մասնակից է համարվում սույն կանոնակարգի 5.8. կետով սահմանված պայմաններով վիճակահանությամբ ընտրված մասնակիցը:

5.10. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և Կազմակերպիչը ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, որից մեկը, հաղթողի կողմից լրիվ վճարումները կատարելու դեպքում, Կազմակերպիչը երեք օրվա ընթացքում տրամադրում է հաղթողին:

5.11. Եթե աճուրդի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առաջարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

6. Լոտի գնի վճարումը

6.1. Աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ, ժամկետ սահմանված չլինելու դեպքում աճուրդում հաղթող ճանաչված անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտ /եր/ի գինը:

Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, երկու օրինակից, որոնցից մեկը մնում է Կազմակերպչի մոտ, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է հանձնարարագրում նշված հաշվին կամ դրամարկղ և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

6.2. Եթե հրապարակային ծանուցմամբ նախատեսվել է աճուրդում հաղթող համարված մասնակցի կողմից՝ տեղում 30 րոպեի ընթացքում, իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումարի վճարում, ապա նշված գումարը նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ: Մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ:

6.3. Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը չի կատարում 6.2. կետի պահանջները, ապա նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից և դուրս է հրավիրվում: Այդ դեպքում տվյալ լոտ/եր/ի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:Աճուրդը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ առկա են տվյալ լոտի գնորդ/ներ/ և համարվում է չկայացած ոչ մի գնորդ չլինելու դեպքում:

Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը կատարում է 6.2. կետի պահանջները, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և Կազմակերպչի հետ միասին ստորագրում է

աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

6.4. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը / ինչպես նաև 6.2. կետում նշված վճարված գումարը/ չի վերադարձվում և տնօրինվում է Կազմակերպչի կողմից, իսկ լոտ/եր/ի աճուրդը համարվում է չկայացած:

6.5. Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը:

6.6. Լոտի գնման գնի վճարման պարտավորությունը ենթակա չէ հաշվանցման:

6.7. Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա՝ նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին, բացառությամբ 6.3. կետում նշված դեպքի: Հակառակ դեպքում նախավճարի գումարը մնում է Կազմակերպչին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Կազմակերպիչը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ և պահպանել աճուրդի հետ կապված փաստաթղթերը /պայմանագրերը, արձանագրությունները և այլն/ աճուրդի ավարտից 3 տարվա ընթացքում:

7.2. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել լոտերի պահպանումը, եթե Առաջարկողի և Կազմակերպչի միջև կնքված աճուրդի մասին պայմանագրով նախատեսված են պահատվությանը վերաբերվող դրույթներ:

7.3. Աճուրդի անցկացման պայմանագրի գործողության ժամկետը համարվում է ավարտված, իսկ աճուրդի անցկացման ծառայությունը մատուցված, լոտ/եր/ի վաճառքից ստացված գումարը Առաջարկողին փոխանցելու /աճուրդը կայանալու դեպքում/ և աճուրդների արդյունքների ամփոփ արձանագրություն/ներ/ը Առաջարկողին ներկայացնելու պահից: